Դավիթ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1995 թ. գերազանցությամբ ավարտել է ԵրԺՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Էկոնոմիկայի պետական կարգավորում» մասնագիտությամբ, 1998 թ.՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության տընտեսագիտական հետազոտությունների ինստիտուտի ասպիրանտուրան: 1999 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 2013 թ.՝ դոկտորի գիտական աստիճան, 2016 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1999-2001 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: 2019 թ. նշանակվել է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն: Դասախոսում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում: Հեղինակ է 15 մենագրության և ավելի քան 80 գիտական հոդվածների ու զեկույցների:

https://orcid.org/0000-0003-3224-2461

ԿՐԹԱԿԱՆ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ XXI ԴԱՐՈՒՄ. ԱՊԱԳԱՅԻ ԿԱՆԽԱԿԱԼ ՄՏՈՐՈՒՄՆԵՐՈՎ

DOI: 10.52174/2579-2989_2023.2-74

Սովորե՛ք և ընթերցե՛ք: Ընթերցե՛ք խոհուն գրքեր: Մնացածը կյանքն ինքը կանի:

Ֆ.Դոստոևսկի

Հիմնաբառեր. *կրթական աղքատություն, դպրոց, ընթերցելու հմտություն, գիտելիք, երեխաներ, ուսուցում*

Ուսուցման ճգնաժամն արտացոլող ցուցանիշներից է կրթական աղքատության մակարդակը. մի եզրույթ, որն իր հետաքրքրական մեկնաբանությամբ կապ է ստեղծում երեխաների գիտելիքի պակասի և աղքատության միջև:

2022 թ. տվյալներով՝ ՀՀ-ում կրթական աղքատության մակարդակը կազմել է 27.2%, այսինքն՝ երեխաների շուրջ մեկ երրորդը չունի ընթերցելու հմտություն: Հետևաբար՝ որպեսզի ունենանք կրթված, զարգացած, հոգեպես առողջ սերունդ, ՀՀ-ում կրթական աղքատության դեմ պայքարը պետք է դառնա ազգային և քաղաքական առաջնահերթություն:

Հոդվածը կրթական աղքատության հիմնախնդրի, տարբեր երկրներում դրա դրսևորումների, գնահատման գործիքակազմի, ՀՀ-ում դրա մակարդակի վերլուծության մասին է:

Կրթությունը մարդու հիմնական իրավունքն է, որը միտված է աղքատությունից դուրսբերմանը, անհավասարությունների հարթմանն ու կայուն զարգացման ապահովմանը[1]: Թեև նշյալ դրույթն (այն է՝ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք) ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և միջազգային իրավական փաստաթղթերում, այդուհանդերձ, աշխարհում դեռևս կան երկրներ, որտեղ նման իրավունքից կարող է օգտվել միայն բնակչության որոշակի մասը[2]:

Կրթության անհասանելիությունը, գիտելիքի պակասը, դասավանդման վատ որակը և դասասենյակներում

[1] UNESCO, The Right to Education, https://www.unesco.org/en/right-education

համակարգչային սարքավորումների անբավարարությունը կամ իսպառ բացակայությունը արտացոլում են կրթական աղքատության տարբեր հայեցակետերը (ասպեկտները): Կրթական աղքատությունն արգելք է հանդիսանում մարդկային կապիտալի կուտակման, տնտեսության զարգացման համար և խթանում անհավասարության վերարտադրումը[3]: Մարդկային կապիտալի պակասուրդի (դեֆիցիտի) առաջացման գործոններից են դպրոցներում կրթության որակական և քանակական ցուցանիշների թերակատարումները[4]: Ըստ Դեյվիդ Մալպասի (Համաշխարհային բանկի խմբի նախագահ)՝ COVID-19 համավարակը պատճառ դարձավ մարդկային կապիտալի ամենամեծ կորստի և հանգեցրեց կրթության ամենավատ ճգնաժամին: Մալպասը նշում է, որ երկրները շարունակելու են զգալ դպրոցների փակման բացասական հետևանքները տասնամյակներ շարունակ[5]:

Ուսուցման համակարգում առկա բացթողումները ստեղծում են խոչընդոտներ՝ ազդելով անհատի բարեկեցության և արտադրողականության մակարդակների վրա, բացի այդ՝ ձևավորվում է մի համոզմունք, որ կրթությունը չի նպաստում աղքատության կրճատմանը, և մշտապես կարող է առաջանալ սոցիալական ու տնտեսական անհավասարություն[6]:

Ընթերցելու հմտության ձեռքբերումը կարևոր իրադարձություն է յուրաքանչյուր երեխայի կյանքում, որը պետք է իրականանա մինչև 10 տարեկան հասակը: Ակնհայտ է, որ տեքստը հասկանալու կարողության ձևավորմանն անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել դպրոցական ուսուցման սկզբնական փուլում, քանի որ գրքի հետ շփումը կարելի է համարել կրտսեր դպրոցականի անհատականության հանրայնացման կարևոր աղբյուրներից մեկը: Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է աշակերտի լեզվամտածողության և տրամաբանության հիմքերի, ուսումնառության և աշխատանքային հմտությունների սկզբնավորմանը, ազգային և համամարդկային արժեքներին նախնական հաղորդակցմանը[7]: Ընթերցանությունը գիտելիքի ձեռքբերման ուղենիշն է, որը նպաստում է երեխայի առաջադիմության բարձրացմանը, և, ընդհակառակը, կարդալու անկարողությունը սահմանափակում է վերջինիս հետագա

[2] STATISTA, Education worldwide - statistics & facts, https://www.statista.com/topics/7785/education-worldwide/#topicOverview

[3] Национальный исследовательский университет «Высшая школа экономики», Научно-образовательный портал,https://iq.hse.ru/news/804520456.html

[4] The World Bank, Ending learning poverty, october 12, 2022, https://www.worldbank.org/en/topic/education/brief/ending-learning-poverty

[5] Լ. Կարապետյան, Լ. Պետրոսյան, Մանկական աղքատության տխուր «դիմանկարը», «Ամբերդ» տեղեկագիր 2022/1, էջ 88, https://asue.am/upload/files/amberd/11.pdf

[6] Armenia, Teacher profile and policies 2021, World Bank Group, էջ 9, https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/35540/Armenia-Teacher-Profile-and-Policies.pdf?sequence=1&isAllowed=y

[7] Ավագյան Օ., Կրտսեր դպրոցականի կողմից տեքստը հասկանալու հիմնախնդիրը հոգեբանության մեջ, «Կաճառ», գիտական հոդվածների ժողովածու. ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, 2017 թ., էջ 285, 288, https://arar.sci.am/dlibra/publication/115103/edition/105001/content

Լուսինե ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

2002 թ. գերազանցությամբ ավարտել է ԵրԺՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Ֆինանսներ և վարկ» մասնագիտությամբ: 2013 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, իսկ 2016 թ.՝ դոցենտի գիտական կոչում: 2010 թ.-ից ՀՊՏՀ աշխատանքի տնտեսագիտության (այժմ՝ բիզնես վարչարարության) ամբիոնի դոցենտ է: Դասավանդել է Միշկոլցի, Պոզնանի տնտեսագիտության և բիզնեսի, Բիալիստոկի տեխնոլոգիական համալսարաններում («Էրազմուս+» ակադեմիական շարժունության ծրագիր): 2019 թ.-ից «Սոցիալական ապահովություն և ապահովագրություն» նեպալյան ամսագրի խմբագրական խորհրդի անդամ է:

Հեղինակ և համահեղինակ է շուրջ երեք տասնյակ գիտական հոդվածների, կոլեկտիվ մենագրությունների, զեկույցների:

https://orcid.org/0000-0002-3894-4803

ուսուցման հնարավորությունները[8]:

Ուսուցման ճգնաժամն արտացոլող ցուցանիշներից է կրթական աղքատության մակարդակը, որը ցույց է տալիս մինչև 10 տարեկան այն երեխաների մասնաբաժինը, որոնք չեն կարողանում ընթերցել նույնիսկ պարզ տեքստեր[9]: Այս ցուցանիշը ներառում է դպրոցական և ուսումնական արդյունքները. առաջին հերթին, հաշվի է առնվում այն երեխաների մասնաբաժինը, որոնք չեն հասել ընթերցանության նվազագույն իմացության, այնուհետև դա ճշգրտվում է դպրոցից դուրս մնացած երեխաների համամասնությամբ (ենթադրելով, որ վերջիններս չեն կարողանում վարժ ընթերցել): Դպրոցից դուրս մնացած երեխաները սահմանվում են որպես դպրոցից զրկվածներ, իսկ ընթերցանության նվազագույն իմացության մակարդակից ցածր գիտելիք ունեցողները՝ ուսուցումից զրկվածներ:

Այսպիսով՝ կրթական աղքատությունը կրթություն ստանալու անկարողությունն է, գիտելիքի անբավարար մակարդակը, որը խոչընդոտում է մարդու սոցիալական ինտեգրումը: Այսինքն՝ այն ամրագրում է կրթության ֆորմալ (ձևական) ցուցանիշների և գիտելիքի իրական որակի միջև եղած անջրպետը, որն ազդում է մարդու ինքնիրացման վրա[10]:

Թեև հնարավոր է՝ երեխաները կյանքում ավելի ուշ սովորեն ընթերցել՝ բավական ջանք գործադրելով, այդուհանդերձ, փորձը ցույց է տալիս, որ տարրական դպրոցն ավարտելուց հետո ընթացքն ավելի է բարդանում՝ անդառնալի հետք թողնելով հետագա դպրոցական առաջադիմության վրա:

Աշխարհում վերջին տարիներին արձանագրվել է մեծաթիվ երեխաների դպրոց չհաճախելու փաստը. նրանց թիվն այսօր հասնում է շուրջ 260 միլիոնի: Սա ուսումնական ճգնաժամի շեմն է, որը սպառնալիք է երկրների՝ մարդկային կապիտալի ստեղծման և կայուն զարգացման նպատակներին ուղղված ջանքերին[11]: Նախքան COVID-19 համավարակի բռնկումը ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում արդեն իսկ կրթական աղքատության մակարդակը բարձր էր՝ կազմելով 57%, իսկ Ենթասահարյան Աֆրիկայում այն հասնում էր շուրջ 86%-ի: Ավելին, 2015 թ.-ից մինչև 2019 թ. ընկած ժամանակահատվածը կարելի է բնորոշել որպես համաշխարհային կրթական աղքատության մակարդակի կրճատման առաջընթացի դադար: Համաձայն Համաշխարհային բանկի գնահատումների՝ COVID-19 համավարակի հետևանքով շուրջ 1,6 միլիարդ աշակերտ չի հաճախել դպրոց՝ պայմանավորված ավելի քան 180 երկրում դպրոցների ժամանակավոր փակմամբ: Տարրական դասարանում սովորող 720 միլիոն երեխայից 382 միլիոնն ունեցել է կրթական աղքատություն (կամ չի հաճախել դպրոց, կամ կարդալու իմացության մակարդակը ցածր է եղել սահմանված նվազագույնից)[12]:

Ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում 10 տարեկան երեխաների շուրջ 70%-ը չի կարողանում հաղթահարել գրագիտության հիմնական թեստը և այժմ կրթական աղքատության մեջ է: Ըստ Համաշխարհային բանկի գնահատումների՝ երեխաները, որոնց կրթությունը խաթարվել է, կարող են իրենց ապագա վաստակից կորցնել շուրջ 21 տրիլիոն ԱՄՆ դոլար[13]:

COVID-19 համավարակի հետևանքով բոլոր տարածաշրջաններում գրանցվել է կրթական աղքատության աճ, սակայն ամենաշատը տուժել է Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի տարածաշրջանը: Այս տարածաշրջանում տարրական դպրոցի ավարտման շեմին երեխաների մոտ 80%-ը չի կարողանում հասկանալ պարզ գրավոր տեքստը, ինչը մո-

[8] The World Bank, Ending learning poverty, october 12, 2022 https://www.worldbank.org/en/topic/education/brief/ending-learning-poverty

[9] State of Global Learning Poverty: 2022 Update, https://reliefweb.int/report/world/state-global-learning-poverty-2022-update?gclid=CjwKCAjwq-WgBhBMEiwAzKSH6NnfMYH6jhVe8A0zMciriXJHIQF49e-Rrdpiy_soExzo6qiQUhennxoCvZAQAvD_BwE, p. 5.

[10] Национальный исследовательский университет «Высшая школа экономики», Научно-образовательный портал, https://iq.hse.ru/news/804520456.html

[11] The World Bank, What is learning poverty?,https://www.worldbank.org/en/topic/education/brief/what-is-learning-poverty

[12] Learning poverty in the time of COVID-19: A crsises within a crises, Dec. 2020, https://documents1.worldbank.org/curated/en/163871606851736436/pdf/Learning-Poverty-in-the-Time-of-COVID-19-A-Crisis-Within-a-Crisis.pdf

[13] World Economic Forum, World Economic Forum, COVID created an aducation crisis that has pushed millions of children into leraning poverty-report, Jul 21, 2022, https://www.weforum.org/agenda/2022/07/education-schools-pandemic-learning-poverty/

տավորապես 50%-ով ավելին է, քան մինչ համավարակը: Կրթական աղքատության մակարդակը բարձր է նաև Հարավային Ասիայում, որտեղ երեխաների 78%-ի մոտ առկա է հիմնական գրագիտության թեստի ձախողման հավանականություն[14]:

Ներկայում կրթական աղքատության կրճատումը տեղի է ունենում դանդաղ տեմպերով և չի ապահովում կայուն զարգացման նպատակի ձգտումը: Այս տեմպերի պահպանման դեպքում կանխատեսվում է, որ 2030 թ.-ին, համաշխարհային մակարդակով, երեխաների շուրջ 43%-ը սովորելու առումով կլինի աղքատ[15]:

Որպես կանոն, անգրագիտությունն ու աղքատությունը ծագում են, պատկերավոր ասած, ձեռք ձեռքի տված: Ցածր եկամտի երկրներում երեխաների համար կրթությունը հաճախ դառնում է ավելի քիչ հասանելի: Ավելին, նույնիսկ այն դեպքում, երբ կրթությունը հասանելի է, անապահով ընտանիքը, հայտնվելով կարիքի մեջ, երեխաներին ուղարկում է աշխատանքի՝ գումար վաստակելու նպատակով: Անգամ մինչև COVID-19 համավարակը ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում 10 տարեկան երեխաների մեծ մասը տառապել է կրթական աղքատությունից[16]:

Կրթական աղքատության վերացումը նույնքան կարևոր է, որքան ծայրահեղ դրամական աղքատության, մանկական թերաճի կամ սովի կանխարգելումը[17]:

Կրթական աղքատությունը, ըստ երկրների եկամտի մակարդակի, ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1-ի տվյալների համաձայն՝ աշխարհում 2019 թ. կրթական աղքատության մակարդակը կազմել է 51,9%: Բարձր և ցածր եկամտի երկրների միջև կրթական աղքատության ճեղքվածքը չափազանց մեծ է, ընդ որում, ցածր եկամտի երկրներում՝ 11 անգամ ավելի բարձր: Ըստ տարածաշրջանների՝ կրթական աղքատությունը 2015 և 2019 թթ.-ի համար համադրելի չէ (գծապատկեր 1):

Գծապատկեր 1-ում արտացոլված կրթական աղքատության համաշխարհային ցուցանիշը վերաբերում է ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներին: Արևելյան Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ցածր և միջին եկամուտ ունեցող երկրների 2015 և 2019 թվականների միջին ցուցանիշներն ուղղակիորեն համադրելի չեն՝ պայմանավորված երկու տարվա ընթացքում երկրների կազմի և գնահատումների փոփոխություններով:

Կրթական աղքատության գնահատման համար աշխարհի տարբեր երկրներում ներդրված են գիտելիքի ստուգման մի շարք գործիքակազմեր: «Միջազգային մաթեմատիկայի և գիտության ուսումնասիրության միտումները (2019)» (Trends in

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Կրթական աղքատությունն ըստ երկրների եկամտի մակարդակի, 2015-2019 թթ., 2022 թ.-ը՝ մոդելի ձևավորման արդյունքների հիման վրա՝ ըստ սցենարների (%)*

	2015	2019	2022		
			Լավատեսական	Միջին	Վատատեսական
Աշխարհ	48	51.9	62.4	64.3	65.5
Բարձր եկամտի երկրներ	9.1	8.0	11.8	13.6	14.7
Միջինից բարձր եկամտի երկրներ	30.3	29.4	41.0	43.1	44.2
Միջինից ցածր եկամտի երկրներ	55.8	60.4	74.5	76.7	78.3
Ցածր եկամտի երկրներ	89.5	90.6	91.6	91.7	91.8

* Տվյալների անհասանելիության պատճառով հնարավոր չի եղել ստուգել 2022 թվականի սցենարների արդյունքները, սակայն դրանք թողնվել են՝ ընդհանուր պատկերն առավել ամբողջական դարձնելու նպատակով:

[14] World Economic Forum, World Economic Forum, COVID created an aducation crisis that has pushed millions of children into leraning poverty-report, Jul 21, 2022, https://www.weforum.org/agenda/2022/07/education-schools-pandemic-learning-poverty/

[15] The World Bank, What is learning poverty?https://www.worldbank.org/en/topic/education/brief/what-is-learning-poverty

[16] The State of Global Learning Poverty: 2022 Update, https://www.unicef.org/media/122921/file/StateofLearningPoverty2022.pdf, p. 18.

[17] "World Bank. 2019. Ending Learning Poverty; Ending Learning Poverty: What Will It Take?. DC. https://openknowledge.worldbank.org/entities/publication/af5e123e-27e9-5d15-b534-ec22ebe42d96



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Կրթական աղքատությունն ըստ տարածաշրջանների (միայն ցածր և միջին եկամտի երկրներ), 2015 թ. և 2019 թ.[18]

International Mathematics and Science Study՝ TIMSS) միջազգային գնահատում է, որն աշխարհի տարբեր տարածաշրջաններից ընդգրկում է 64 երկիր: 2015 թ. այս համակարգում ներառված է եղել 57 երկիր: Վերջինիս միջոցով թեստավորվում են 4-րդ և 8-րդ դասարաններում սովորող աշակերտները՝ «Մաթեմատիկա» և «Բնագիտություն» առարկաներից (միջազգային գնահատում): Տարրական կրթության աղքատությունը չափելու համար գործածվում է 4-րդ դասարանի արդյունքը: «TIMSS 2019»-ի արդյունքը կիրառվել է 2022 թ. հունիսին՝ 11 երկրի կրթական աղքատության մակարդակը հաշվարկելու համար: Այդ երկրներն են Ալբանիա, Հայաստանը, Չիլին, Խորվաթիան, Կիպրոսը, Ճապոնիան, Կորեայի Հանրապետությունը, Չեռնոգորիան, Հյուսիսային Մակեդոնիան, Սերբիան և Թուրքիան (աղյուսակ 2)[19]:

Վերոնշյալ 11 երկրից կրթական աղքատության ամենաբարձր մակարդակը գրանցվել է Հյուսիսային Մակեդոնիայում՝ 40,9%: Հայաստանում, Չիլիում և Մոնտենեգրոյում կրթական աղքատության մակարդակը նույնպես բարձր է՝ կազմելով 27,2%, իսկ ամենացածրը Կորեայի Հանրապետությունում է՝ 3,2% և Ճապոնիայում՝ 3,6%:

Հարավարևելյան Ասիայում կիրառվում է Հարավարևելյան Ասիայի տարրական կրթության գնահատումը (SEA-PLM Southeast Asia Primary Learning Metrics): «SEA-PLM»-ը տարածաշրջանային գնահատման և կարողությունների զարգացման ծրագիր է, որի հիմնական նպատակն է թեստավորել 5-րդ դասարանում սովորող աշակերտներին՝ ստուգելով նրանց ընթերցանության, գրելու, մաթեմատիկայի իմացության մակարդակը, ինչպես նաև բարելավել հիմնական կրթություն ստացող աշակերտների ուսումնառության արդյունքը: Այն բաղկացած է երեք հիմնական սյուներից[20].

- ստեղծել կրթական արդյունքի և համատեքստի վերաբերյալ համեմատական տվյալներ, ցուցանիշներ, կատարել վերլուծություն,
- բարելավել հիմնական կրթության ոլորտում ներդրված համակարգի և

[18] The State of Global Learning Poverty: 2022 Update, https://www.unicef.org/media/122921/file/StateofLearningPoverty2022.pdfhttps://www.unicef.org/media/122921/file/StateofLearningPoverty2022.pdf, p. 24.
[19] Կազմել են հեղինակներն ըստ հետևյալ աղբյուրի. The State of Global Learning Poverty: 2022 Update:
[20] Southest Asia Primary Learning Metrics, https://www.seaplm.org/index.php?lang=en

դպրոցական մակարդակի քաղաքականությունն ու փորձառությունը,
- ամրապնդել համագործակցությունն ու փոխանակումները, խթանել և բարելավել տեխնիկական կարողությունները, ինչպես նաև ապացույցների կիրառումը:

Սույն համակարգը կիրառվում է հետևյալ երկրներում՝ Կամբոջա, Լաոսի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետություն, Մալայզիա, Մյանմար, Ֆիլիպիններ և Վիետնամ:

Ենթասահարյան Աֆրիկայում ներդրված է Կրթական համակարգի վերլուծության ծրագիրը (The Programme for the Analysis of Education Systems՝ PASEC): «PASEC 2014»-ը կենտրոնացած է տարրական դասարանների աշակերտների գիտելիքի միջազգային համադրելիության գնահատման վրա (սկզբում և վերջում)՝ վերլուծելով կրթական համակարգերի արդյունավետությունն ու հավասարությունը: Այն գնահատում է 2-րդ և 6-րդ դասարաններում սովորողների գիտելիքը երկու հիմնական առարկաներից՝ լեզվից և մաթեմատիկայից:

«PASEC 2019»-ը, ինչպես «PASEC 2014»-ը, կենտրոնացված է[21]: Այն տարածաշրջանային գնահատում է, որն ընդգրկում է Ենթասահարյան Աֆրիկայի 14 երկիր[22]:

Լատինական Ամերիկայում գործում է Կրթության որակի գնահատման լատինամերիկյան լաբորատորիան[23]: Սա ևս տարածաշրջանային գնահատում է, որն ընդգրկում է հետևյալ 16 երկիրը՝ Արգենտինա, Բրազիլիա, Կոլումբիա, Կոստա Ռիկա, Դոմինիկյան Հանրապետություն, Էկվադոր, Էլ Սալվադոր, Գվատեմալա, Հոնդուրաս, Մեքսիկա, Նիկարագուա, Պանամա, Պարագվայ, Պերու և Ուրուգվայ[24]:

Լաբորատորիայի հիմնական գործառույթներն են[25].
- համակարգել տարածաշրջանային ուսումնասիրությունները,
- չափել սովորողների ձեռքբերումները,
- իրականացնել ուսումնառության աջակցության վերաբերյալ իրազեկման քաղաքականություն տարածաշրջանում,
- հզորացնել երկրների կարողությունները՝ ստեղծելու և օգտագործելու փաստարկներ կրթության որակի վերաբերյալ:

Գոյություն ունի նաև «Նվազագույն իմացության մակարդակի գնահատումնե-

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Կրթական աղքատության ցուցանիշները համադրելի երկրներում (2019 թ.), %

	Կրթական աղքատություն	Ուսումնական զրկանքներ	Դպրոցական զրկանքներ
Հայաստան	27.2	19.9	9.2
Ալբանիա	16.5	14.3	2.6
Չիլի	27.2	23.2	5.2
Խորվաթիա	4.5	2.5	2.0
Կիպրոս	9.9	7.9	2.2
Ճապոնիա	3.6	1.8	1.8
Կորեայի Հանր.	3.2	0.8	2.5
Մոնտենեգրո	27.1	24.7	3.1
Հս. Մակեդոնիա	40.9	38.2	4.3
Սերբիա	9.8	8.2	1.8
Թուրքիա	14.5	9.9	5.1

[21] Pasec Education System Performance in Confemen countires: Competencies and Learning Factors in Primary Education, GAML Steering CommitteeWashington May 11th 2016, https://gaml.uis.unesco.org/wp-content/uploads/sites/2/2018/08/1_PASEC-for-GAML-meeting_20160511.pdf

[22] The State of Global Learning Poverty: 2022 Update, https://reliefweb.int/report/world/state-global-learning-poverty-2022-update?gclid=CjwKCAjwq-WgBhBMEiwAzKSH6PcFPXIgWISEjN2vwUbFgFhRtLgTYtIUvFEHgn75iUEzbiyYVZGW8BoCHwEQAvD_BwE

[23] The Center for Global Education Monitoring, https://www.acer.org/files/AssessGEMs_LLECE.pdf

[24] The State of Global Learning Poverty: 2022 Update, https://reliefweb.int/report/world/state-global-learning-poverty-2022-update?gclid=CjwKCAjwq-WgBhBMEiwAzKSH6PcFPXIgWISEjN2vwUbFgFhRtLgTYtIUvFEHgn75iUEzbiyYVZGW8BoCHwEQAvD_BwE

[25] LLECE-ERCE UNESCO's Large Scale Student Assessment Program in LAC Carlos Cayumán Cofré.

ԱՂՅՈՒՍԱԿ 3

ՀՀ կրթական աղքատության մակարդակը և այն բնութագրող ցուցանիշներն ըստ սեռի (2019-2022 թթ.)[26]

	2019			2021			2022		
	տղաներ	աղջիկներ	ընդամենը	տղաներ	աղջիկներ	ընդամենը	տղաներ	աղջիկներ	ընդամենը
Կրթական աղքատություն (%)	38,3	31,5	35	28	23,8	26,1	29,1	25,2	27,2
Նվազագույն իմացության մակարդակից ցածր (%)	33,2	26,7	30	22,1	17,5	20	22,1	17,5	19,9
Դպրոցից դուրս մնացածներ (%)	7,7	6,6	7,2	7,6	7,7	7,6	9	9,3	9,2
Մարդկային կապիտալի ինդեքս	0,55	0,59	0,57	0,56	0,6	0,58	0,56	0,6	0,58
Ուսումնատության տարիներ՝ ճշգրտված դպրոցական ուսուցման տարիներով	7,7	8,1	7,9	7,8	8,3	8	7,8	8,3	8

ի նորարար գործիքը» (Assessments for Minimum Proficiency Levels՝ AMPL-b 2021)[27], որը նպատակ ունի չափելու ընթերցանության և մաթեմատիկայի տիրույթները կրթական պարբերաշրջանի տվյալ մակարդակում: «AMPL» գործիքները թույլ են տալիս կրթության յուրաքանչյուր մակարդակում նույնականացնել այն երեխաների և երիտասարդ սովորողների մասնաբաժինը, որոնք հասնում են առնվազն նվազագույն իմացության աստիճանի: «AMPL-b 2021» մշտադիտարկման նախաձեռնությունը երկրներին հնարավորություն է ընձեռել չափելու նաև COVID-19-ի ազդեցությունը սովորելու վրա[28]:

Աշխարհի մի շարք երկրների նման, ՀՀ-ում կրթական աղքատության մակարդակը նույնպես բարձր է: ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք, ընդ որում, պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է[29]: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուսումնական աղքատությունը Հայաստանում 21.7 տոկոսային կետով ավելի բարձր է, քան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի և մոտ 30 տոկոսային կետով ավելի բարձր, քան ԵՄ միջին ցուցանիշները (գծապատկեր 2):

Չնայած երկրի բարձր ինստիտուցիոնալ հնարավորություններին՝ ուսումնական աղքատության այս մակարդակի հիմքում առկա են հետևյալ հիմնարար գործոնները[30].

1. գրագիտությունը չի համապատասխանում ընդհանուր ուսումնական ծրագրին,
2. ոչ համարժեք աջակցություն է ցուցաբերվում ուսուցիչներին՝ դասերի ծրագրման համար,
3. ընթերցանության նյութերը չեն համապատասխանում հատկանշված բովանդակությանը և այլն:

ՀՀ-ում կրթական աղքատության մակարդակն ըստ սեռի վերլուծելիս ակնհայտ է դառնում, որ 2022 թ.-ին տղաների աղքատության մակարդակը շուրջ 4 տոկոսային կետով ավելի բարձր է, քան աղջիկներինը (աղյուսակ 3):

[26] The World Bank, https://www.worldbank.org/en/topic/education/brief/country-learning-poverty-briefs
[27] UN Global Market Place, https://www.ungm.org/Public/Notice/177993.
[28] The State of Global Learning Poverty: 2022 Update, https://reliefweb.int/report/world/state-global-learning-poverty-2022-update?gclid=CjwKCAjwq-WgBhBMEiwAzKSH6PcFPXIgWISEjN2vwUbFgFhRtLgTYtIUvFEHgn75iUEzbiyYVZGW8BoCHwEQAvD_BwE
[29] ՀՀ Սահմանադրություն, https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510, հոդված 38:
[30] https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/35540/Armenia-Teacher-Profile-and-Policies.pdf?sequence=1&isAllowed=y, p. 22.



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Կրթական աղքատությունը Հայաստանում և արտասահմանյան երկրներում (2019 թ.)[31]

ՀՀ-ում 2021/2022 ուսումնական տարում, 2015/2016 ուսումնական տարվա համեմատ, աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշը նվազել է 3,3 տոկոսային կետով՝ կազմելով 83,1%, սակայն տարրական դասարաններում արձանագրվել է աճ՝ 1,4 տոկոսային կետով: Աշակերտների զուտ և ճշգրտված ընդգրկվածության ցուցանիշները նույն ժամանակահատվածում ավելացել են մոտ 1, իսկ նախորդ ուսումնական տարվա համեմատ՝ 0,3 տոկոսային կետով: Համախառն

ԱՂՅՈՒՍԱԿ 4

ՀՀ հանրակրթական դպրոցներում աշակերտների ընդգրկվածության հիմնական ցուցանիշները (ըստ 2015-2022 ուստարիների)[32]

	2015/2016	2016/2017	2017/2018	2018/2019	2019/2020	2020/2021	2021/2022
Աշակերտների համախառն ընդգրկվածության ցուցանիշը, %, ընդամենը*	86,4	86	85,7	83	83,2	83,2	83,1
Տարրական	91,6	91,2	91,3	91,1	92,9	93,2	93
Աշակերտների զուտ ընդգրկվածության ցուցանիշը, %, տարրական**	89,4	89,1	89,4	88,2	89,8	90,1	90,4
Աշակերտների ճշգրտված «ընդգրկվածության» ցուցանիշը, %, տարրական***	89,6	89,5	89,5	88,3	89,9	90,2	90,5

Ծանոթագրություն

* *Կրթահամակարգում համախառն ընդգրկվածության ցուցանիշ՝ տվյալ կրթահամակարգի դասարանների աշակերտների ընդհանուր թվաքանակի տոկոսային մասնաբաժինն է մշտական բնակչության նույն կրթահամակարգի համար պաշտոնապես սահմանված տարիքային խմբի թվաքանակի նկատմամբ:*

** *Կրթահամակարգում զուտ ընդգրկվածության ցուցանիշ՝ տվյալ կրթահամակարգի համար պաշտոնապես սահմանված տարիքային խմբի համապատասխան դասարանների աշակերտների ընդհանուր թվաքանակի տոկոսային մասնաբաժինն է մշտական բնակչության նույն տարիքային խմբի թվաքանակի նկատմամբ:*

*** *Կրթահամակարգում «Ճշգրտված զուտ ընդգրկվածության» ցուցանիշ՝ տվյալ կրթահամակարգի համար պաշտոնապես սահմանված տարիքային խմբի աշակերտների ընդհանուր թվաքանակի տոկոսային մասնաբաժինն է մշտական բնակչության նույն տարիքային խմբի թվաքանակի նկատմամբ:*

[31] Կազմված է ըստ հետևյալ կայքէջի աղբյուրի տվյալների, https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/35540/Armenia-Teacher-Profile-and-Policies.pdf?sequence=1&isAllowed=y

[32] Կազմված է ՀՀ սոցիալական վիճակը վիճակագրական ժողովածուների համապատասխան տարիների տվյալների հիման վրա:

ընդգրկվածության ամենացածր ցուցանիշն արձանագրվել է 2018/2019 ուսումնական տարում՝ 83%, իսկ տարրական դասարաններում՝ 91,1%:

Այսպիսով՝ եթե չձեռնարկվեն կրթական աղքատությունը նվազեցնելու հրատապ միջոցառումներ և հստակ գործողություններ, ապա աշխարհը կկանգնի մարդկային կապիտալի աղետի առջև: Եթե երեխաները չտիրապետեն գրագիտության հիմունքներին (ընթերցանություն, թվաբանություն և այլ հիմնարար գիտելիք ու հմտություններ), ապա աշխարհի հարյուրմիլիոնավոր երեխաների և, առհասարակ, տվյալ հասարակության ապագան լուրջ վտանգի տակ կհայտնվի[33]: Վճռականորեն գործելու համար գոյություն ունի մեկ ելք՝ վերականգնել և արագ տեմպերով լրացնել բաց թողնված ուսումը:

Ամփոփելով կարող ենք ասել, որ ընտանեկան և ինստիտուցիոնալ պայմաններն են նվազեցնում կրթության հասանելիությունը՝ առաջացնելով գիտելիքի պակաս: Նման պայմաններում երեխային դժվար է լավ սովորել, ձեռք բերել պահանջվող հմտությունները, ինչպես նաև զարգացնել սեփական կարողությունները: Բացի այդ, կարևոր են պետության վարած քաղաքականությունը, հստակ ծրագրերի առկայությունը, կամքը, որոնց միջոցով հնարավորություն կստեղծվի վերանայելու գոնե տարրական կրթության աղքատության պատկերը և ունենալու կրթված սերունդ: Միաժամանակ, անհրաժեշտ է կիրառել սովորողների գիտելիքահենք արդյունքների գնահատման այլ գործիքակազմեր՝ հաշվի առնելով ոչ միայն դպրոցական վկայականները, այլև տնտեսական, սոցիալական և անձնական հաջողության իրական հնարավորությունները:

Ակնհայտ է, որ աղքատություն ծնող պատճառներից մեկը, եթե ոչ՝ ամենակարևորը, հենց կրթական աղքատությունն է, և տասնյակ տարիների փորձը վկայում է, որ, որպես կանոն, աղքատ են լինում հենց կրթական ցածր մակարդակ ունեցող (կամ առհասարակ չունեցող) անձինք:

Ստացվում է, որ աղքատության նվազեցման և/կամ վերացմանն ուղղված ջանքերը պետք է սևեռվեն հենց կրթության վրա, քանի որ և՛ երկրի տնտեսական զարգացման, և՛ հասարակության արժեքային համակարգի, և՛ բնակչության կենսամակարդակի ու կյանքի որակի բարձրացման ճանապարհները տանում են դեպի մրցունակ, ազգային ոգով տոգորված և ժամանակակից պահանջներին համապատասխանող կրթական համակարգի ստեղծում:

[33] The State of Global Learning Poverty: 2022 Update , https://reliefweb.int/report/world/state-global-learning-poverty-2022-update?gclid=CjwKCAjwq-WgBhBMEiwAzKSH6PcFPXIgWISEjN2vwUbFgFhRtLgTYtIUvFEHgn75iUEzbiyYVZGW8BoCHwEQAvD_BwEhttps://www.unicef.org/media/122921/file/StateofLearningPoverty2022.pdf, p. 7.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կարապետյան Լ., Պետրոսյան Լ., Մանկական աղքատության տխուր «դիմանկարը», «Ամբերդ» տեղեկագիր, 2022/1, էջ 88, https://asue.am/upload/files/amberd/11.pdf
2. Ավագյան Օ., Կրտսեր դպրոցականի կողմից տեքստը հասկանալու հիմնախնդիրը հոգեբանության մեջ, «Կաճառ», գիտական հոդվածների ժողովածու. ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, 2017, էջ 285, 288, https://arar.sci.am/dlibra/publication/115103/edition/105001/content
3. ՀՀ Սահմանադրություն, https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510
4. ՀՀ սոցիալական վիճակը 2021 թ., ՀՀ ՎԿ, Վիճակագրական ժողովածու, Եր., 2022, https://www.armstat.am/file/article/soc_sit_2021_2.pdf
5. ՀՀ սոցիալական վիճակը 2020 թ., ՀՀ ՎԿ, Վիճակագրական ժողովածու, Եր., 2021, https://armstat.am/file/article/soc_vich_2020_2.pdf
6. ՀՀ սոցիալական վիճակը 2019 թ., ՀՀ ՎԿ, Վիճակագրական ժողովածու, Եր., 2020, https://armstat.am/file/article/soc_vich_2019_2.pdf
7. ՀՀ սոցիալական վիճակը 2018 թ., ՀՀ ՎԿ, Վիճակագրական ժողովածու, Եր., 2019, https://armstat.am/file/article/soc_vich_2018_2.pdf
8. ՀՀ սոցիալական վիճակը 2017 թ., ՀՀ ՎԿ, Վիճակագրական ժողովածու, Եր., 2018,

https://armstat.am/file/article/soc_vich_2017_2.pdf
9. ՀՀ սոցիալական վիճակը 2016 թ., ՀՀ ՎԿ, Վիճակագրական ժողովածու, Եր., 2017, https://armstat.am/file/article/soc_2016_2.pdf
10. ՀՀ սոցիալական վիճակը 2015 թ., ՀՀ ՎԿ, Վիճակագրական ժողովածու, Եր., 2016, https://armstat.am/file/article/soc_15_2.pdf
11. Национальный исследовательский университет «Высшая школа экономики», Научно-образовательный портал, https://iq.hse.ru/news/804520456.html
12. Armenia, Teacher profile and policies 2021, World Bank Group, էջ 9, https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/35540/Armenia-Teacher-Profile-and-Policies.pdf?sequence=1&isAllowed=y
13. Learning poverty in the time of COVID-19: A crsises within a crises, Dec. 2020, https://documents1.worldbank.org/curated/en/163871606851736436/pdf/Learning-Poverty-in-the-Time-of-COVID-19-A-Crisis-Within-a-Crisis.pdf
14. LLECE-ERCE UNESCO′s Large Scale Student Assessment Program in LAC Carlos Cayumán Cofré, https://gaml.uis.unesco.org/wp-content/uploads/sites/2/2019/05/GAML6-Session5-LLECE.pdf
15. Pasec Education System Performance in Confemen countires: Competencies and Learning Factors in Primary Education, GAML Steering CommitteeWashington May 11th 2016, https://gaml.uis.unesco.org/wp-content/uploads/sites/2/2018/08/1_PASEC-for-GAML-meeting_20160511.pdf
16. Southest Asia Primary Learning Metrics, https://www.seaplm.org/index.php?lang=en
17. STATISTA, Education worldwide - statistics & facts, https://www.statista.com/topics/7785/education-worldwide/#topicOverview
18. State of Global Learning Poverty: 2022 Update, https://reliefweb.int/report/world/state-global-learning-poverty-2022-update?gclid=CjwKCAjwq-WgBhBMEiwAzKSH-6NnfMYH6jhVe8A0zMciriXJHIQF49e-Rrdpiy_soEx-zo6qiQUhennxoCvZAQAvD_BwE
19. The World Bank, Ending learning poverty, october 12, 2022, https://www.worldbank.org/en/topic/education/brief/ending-learning-poverty
20. The World Bank, What is learning poverty?, https://www.worldbank.org/en/topic/education/brief/what-is-learning-poverty
21. The World Bank, https://www.worldbank.org/en/topic/education/brief/country-learning-poverty-briefs
22. The Center for Global Education Monitoring, https://www.acer.org/files/AssessGEMs_LLECE.pdf
23. “World Bank. 2019. Ending Learning Poverty; Ending Learning Poverty : What Will It Take?. DC. https://openknowledge.worldbank.org/entities/publication/af5e123e-27e9-5d15-b534-ec22ebe42d96
24. UNESCO, The Right to Education, https://www.unesco.org/en/right-education
25. World Economic Forum, World Economic Forum, COVID created an aducation crisis that has pushed millions of children into leraning poverty-report, Jul 21, 2022, https://www.weforum.org/agenda/2022/07/education-schools-pandemic-learning-poverty/

Давид АХВЕРДЯН
Директор исследовательского центра «Амберд», АГЭУ, доктор экономических наук, профессор
Лусине КАРАПЕТЯН
Доцент кафедры бизнес администрирования, кандидат экономических наук, АГЭУ

ОБРАЗОВАНИЕ, ИННОВАЦИИ, ЗНАНИЯ

ОБРАЗОВАТЕЛЬНАЯ БЕДНОСТЬ В 21 ВЕКЕ: ПРЕДВЗЯТЫЕ РАССУЖДЕНИЯ О БУДУЩЕМ

Одним из показателей кризиса обучения является «уровень образовательной бедности», термин, который своей интересной трактовкой создает связь между недостатком знаний у детей и бедностью.

По данным 2022 года, уровень образовательной бедности в РА составил 27,2%, то есть около трети детей в республике не обладают навыком чтения. Следовательно, если мы хотим иметь образованное, развитое и душевно здоровое поколение, то борьба против образовательной бедности должна стать национальным и политическим приоритетом.

В данной статье обсуждаются проблемы образовательной бедности, степень ее выражения в разных странах, инструментарий оценки данной проблемы, анализ уровня этой проблемы в РА.

Ключевые слова: *образовательная бедность, школа, навык чтения, дети, обучение*

Davit HAKHVERDYAN
Director of «Amberd» Research Center, ASUE,
Doctor of Sciences (Economics), Professor
Lusine KARAPETYAN
Associate Professor of the Chair of Business Administration, ASUE,
PhD in Economics

EDUCATION, INNOVATION, KNOWLEDGE

LEARNING POVERTY IN THE 21ST CENTURY: WITH PRECONCEIVED NOTIONS OF THE FUTURE

One of the indicators reflecting the crisis of education is learning poverty; a term establishing a correlation between the limited knowledge of children and poverty alongside its fascinating interpretation.

According to the data for 2022, the level of learning poverty in the RA stood at 27.2%, namely about one-third of children lack reading skills in our country. Therefore, the struggle against learning poverty in the Republic of Armenia must become a national and political priority in order to have an educated, developed, and mentally healthy generation.

This paper aims to touch upon the problem of learning poverty, its manifestation in different countries, evaluation tools, and the analysis of its level in the Republic of Armenia.

Keywords: *learning poverty, school, reading skill, knowledge, children, education*